ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 սեպտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

125
(2975)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԱԺ-ՈՒՄ Է ԱՆՑԵԼ. ՀԱՆՑԱՆՔ

ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը, նշանակվելով ՀՀ բարձր պաշտոնի, որոշել է նոր մասնագիտություն ձեռք բերել, բայց կրթական ողջ գործընթացը խիստ կասկածահարույց է: Նա պրակտիկա է անցել իր ղեկավարած հիմնարկությունում, ինչը, ըստ մասնագետների, քրեական բնույթի հանցագործություն է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ ստացավ, որ ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանը խիստ արտոնյալ պայմաններում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում ուսանել. դասապրոցեսներին գրեթե չի մասնակցել, քննությունները հանձնել է արտոնյալ կարգավիճակով, եւ անգամ համակուրսեցիները չեն հիշում նրան կամ դժվարությամբ են մտաբերում՝ որպես ուսանողի: Դե իսկ ուսումնական պրակտիկան էլ անցել է հենց նույն Ազգային ժողովում, որտեղ աշխատակազմի ղեկավար է:

Այս տեղեկությունները փորձեցինք նախ ճշտել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից: Սակայն Գիտակրթական միջազգային կենտրոնի դեկան Ատոմ Մխիթարյանը մոտ 2 էջ հիմնավորում ուղարկեց, որ բարձրաստիճան պաշտոնյա Դավիթ Առաքելյանի ուսումնական գործընթացի մասին որեւէ տեղեկություն չի կարող տրամադրել, քանի որ դրանք անձնական տվյալներ են: Բայց հանրային շահն այստեղ առավել կարեւոր է. ուստի «Ժողովուրդ» օրաթերթը, ինչպես միշտ, առաջնորդվում է հանրային շահով: Հարցաշար ուղարկեցինք նաեւ Ազգային ժողով՝ Դավիթ Առաքելյանից հետաքրքրվելով՝

«1. ինչ առաջադիմությամբ եք սովորել ԳԱԱ-ում

2. ինչ հաճախականությամբ եք մասնակցել դասապրոցեսներին

3. որքա՞ն եք բացակայել դասաժամերից եւ ինչ հիմնավորմամբ են դրանք հարգելի համարվել

4. մագիստրոսական թեզի պաշտպանությունն ինչպե՞ս է անցել, ո՞վ կամ ովքե՞ր են ղեկավարել Ձեր թեզը

5. ո՞րտեղ եք անցել ուսումնական փորձառությունը (պրակտիկան) եւ ո՞ւմ ղեկավարմամբ

6. ուսումնական փորձառության (պրակտիկա) ինչ արդյունք եք գրանցել»:

Այս հարցերին պատասխանել է աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդուարդ Խանզրադյանը՝ հայտնելով, որ Դավիթ Առաքելյանն իր ուսումնական պրակտիկան անցկացրել է ԱԺ-ում, իսկ մյուս հարցերին խուսափել է պատասխանելուց՝ թերեւս ասելիքի բացակայության կամ իրականությունը թաքցնելու հիմքով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Մինչ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի գլխավորությամբ ձեւավորված Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը զբաղված է Մայր օրենքի հիմնական դրույթների փոփոխությամբ՝ ՀՀ ԱԳՆ-ից պնդում են՝ Սահմանադրությանն առնչվող հարցերը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ներքին գործը: «Ժողովուրդ» օրաթերթն օրեր առաջ հարցում էր ուղարկել ՀՀ ԱԳՆ՝ պարզելու, թե ինչ փուլում են Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի շուրջ բանակցությունները, ինչ ժամկետում են կողմերը պատրաստվում ստորագրել փաստաթուղթը, ինչպես նաեւ հետաքրքրվել էինք՝ հայկական կողմը պատրաստվո՞ւմ է կատարել արդյոք Ադրբեջանի՝ ՀՀ Սահմանադրությունը փոխելու պահանջը, որը որպես խաղաղության պայմանագրի ստորագրման հիմնական նախապայմանն է համարում Իլհամ Ալիեւը: ՀՀ ԱԳՆ-ից, մեր հարցին ի պատասխան, հայտնել են. «ՀՀ Սահմանադրությանն առնչվող հարցերը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ներքին գործը»: Այսինքն՝ մի կողմից արդարադատության նախարարի գլխավորությամբ Սահմանադրական բարեփոխումների խորհուրդն այս օրերին նիստեր է անում, քննարկում Մայր օրենքը փոփոխելու հարցը, մի կողմից էլ ՀՀ ԱԳՆ-ից պնդում են, որ դա Ադրբեջանի նախապայմանը չէ: Ինչ վերաբերվում է բանակցությունների վերաբերյալ հարցերին՝ ԱԳՆ-ից հերթական անգամ խուսափողական պատասխան են տվել. «Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման, ինչպես նաեւ երկու երկրների միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրման գործընթացի շրջանակներում հանրայնացման ենթակա տեղեկատվությունը պատշաճ կերպով եւ ողջամիտ պահանջներով տրամադրվում է հանրությանը»:

Ադրբեջանական Հանրապետություն
Ազգային ժողով

Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության

Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության

Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության

ԶՐՈՒՅՑ

ԱԶԱՏԵԼ ԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ սեպտեմբերի 13-ին Իգոր Սարգսյանն ազատվել է բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնից: Վերջինս վարչապետի՝ սեպտեմբերի 11-ի որոշմամբ էր վերականգնվել այդ պաշտոնում:

Նշենք, որ Իգոր Սարգսյանը Բագրատ Սրբազանի նախաձեռնած շարժման ակտիվ մասնակիցներից է:

-Պարոն Սարգսյան, Դուք սեպտեմբերի 11-ին վերականգնվել էիք բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում, սակայն ընդամենը 2 օր պաշտոնավարեցիք. ամսի 13-ին Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, դատարանի ճնշմամբ, աշխատանքից ազատվեցիք: Ի՞նչ պատճառաբանություններ են ներկայացվել Ձեզ, եւ այս երեւույթն ինչպե՞ս կորակեիք:

-Նախ, նշեմ, որ ոչ թե երկու, այլ անգամ մեկ օր չեմ կարողացել աշխատել. ամսի 12-ին ինձ ծանուցել են վարչապետի որոշման մասին, 13-ին տեղեկացել եմ, որ ազատված եմ աշխատանքից: Ոչ մի պատճառաբանություն չի տրվել, պարզապես նշել են օրենքի այն հոդվածները, որով ինձ ազատել են աշխատանքից: Իհարկե, դեռ հարցում պետք է իրականացնեմ՝ հասկանալու, թե որն էր հիմքը՝ ինձ աշխատանքից ազատելու:

-Իսկ Դուք որեւէ վարկած, դիտարկում ունե՞ք, սխա՞լ եք թույլ տվել, թե՞ քաղաքական որոշում է....:

-Պատճառը քաղաքական է, եւս մեկ անգամ համոզվեցի, սակայն նախկինում չեմ ցանկացել ասել՝ «քաղաքական» որոշում է, համարել եմ այն աշխատանքային վեճ, որը կարող էր լուծվել դատարանի միջոցով:

2023 թվականի մայիսին եւս նման խնդիրներ եղան, վճռաբեկ դատարանը որոշում կայացրեց պաշտոնական պարտականություններս վերականգնելու, սակայն չվերականգնեցին այդպես էլ. ստիպված մեկ տարի 4 ամիս վարչական դատարաններ դիմեցին, սահմանադրական դատարանի որոշումից հետո դարձյալ վճռաբեկ դատարան դիմեցին, որ ինձ աշխատանքի չընդունեին, սակայն վճռաբեկ դատարանը եւս երկու անգամ այս նույն գործի շրջանակում նշեց, որ, «ո՛չ, վճիռն ուժի մեջ է մտնում, պարտավոր եք պաշտոնայային վերականգնելու աշխատանքի»: Հիմա վերականգնեցին, սակայն մեկ օր չանցած՝ որոշում կայացրին ազատելու:

-Իսկ մեկ օրվա ընթացքում հասցրե՞լ էիք ինչ-որ աշխատանք կատարել, կամ գոնե ծանոթանալ աշխատակիցների հետ:

-Ես աշխատակիցների հետ ծանոթանալու խնդիր չունեի. ծանոթացել եմ տեսչական մարմնի ղեկավարի հետ. իր մոտ եմ եղել ամսի 12-ին: Տեսչական մարմնի ղեկավարն է ծանոթացրել ինձ վարչապետի որոշմանը, զրուցել ենք ընդհանրապես աշխատանքի վերաբերյալ: Ես կարծում եմ՝ նա պատկերացրեց, որ իմ մասնագիտական գիտելիքները եւ աշխատանքային փորձը, հմտությունները բավարարում են աշխատելու համար: Դա վճռաբեկ դատարանով եւ մի քանի դատարաններով ֆիքսվեց, որ ես մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների անբավարարության խնդիր չունեմ, նամանավանդ, որ բնագետ եմ մասնագիտությամբ, եւ գրեթե 20 տարի աշխատել եմ այդ ոլորտում:

-Իսկ պատրաստվո՞ւմ եք վիճարկել որոշումը:

-Այս պահին դեռեւս հստակ որոշում չունեմ: Կպահանջեմ, որ ինձ տրամադրեն ազատման հիմքերը, ըստ այդմ՝ կորոշեմ՝ աշխատել իրենց հետ, թե չաշխատել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ՀՐԱՎԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼ Է

ԻՆՉՈ՞Ւ ՆԵՐԿԱ ՉԵՆ ԳՏՆՎԻ ՎԵՐԱՕԾՄԱՆ ԾԵՍԻՆ

Սեպտեմբերի 28-ին Սուրբ Տրդատի բաց խորանում տեղի կունենա Մյուռոնօրհնության սուրբ արարողություն, հաջորդ օրը՝ սեպտեմբերի 29-ին, կվերաօծվի Մայր Տաճարը:



Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը հայտարարեց, որ հրավերներ ուղարկվել են իշխանություններին, իսկ ներկա գտնվելն իրենց որոշումն է:

ArmLur.am-ը փորձում է ճշտել ՀՀ պաշտոնյաներից՝ մասնակցելո՞ւ են Մայր Տաճարում անցկացվելիք միջոցառումներին:

ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչության պետ ղեկավար Աղասի Մարգարյանից հետաքրքրվեցինք՝ Վահագն Խաչատուրյանն այդ օրը լինելո՞ւ է Էջմիածնում:

Մեզ հայտնեցին, որ հրավեր Մայր աթոռից ստացել են, սակայն զբաղված գրաֆիկի պատճառով, դեռ չեն որոշել՝ նախագահը մասնակցելո՞ւ է Մյուռոնօրհնությանը եւ Տաճարի վերաօծմանը. մասնակցության մասով որոշում լինելու դեպքում՝ հավելյալ կտեղեկացնեն:

Փորձեցինք տեղեկանալ նաեւ Երեւանի քաղաքապետարանից՝ արդյոք Տիգրան Ավինյանը ներկա կգտնվի՞ Մյուռոնօրհնությանը, թե՞ ոչ:

Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը մեզ հետ զրույցում ասաց, որ Տիգրան Ավինյանն այդ ընթացքում գործուղման է լինելու, այդ պատճառով չի կարողանա ներկա գտնվել Մյուռոնօրհնության արարողությանը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՉԵՆ ՍՏՈՐԱԳՐԻ

Ադրբեջանի իշխանությունները չեն պատրաստվում Հայաստանի հետ ստորագրել խաղաղության պայմանագիրն այնպես, ինչպես առաջարկում է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այդ մասին հայտարարել է այդ երկրի արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Այխան Հաջիզադեն:

«Ընդհանուր առմամբ, վերջին մի քանի շաբաթների ընթացքում Հայաստանի պաշտոնյաները սահմանափակվել են խաղաղության պայմանագրի վերաբերյալ հիմնականում հակասական հայտարարություններով: Դրանք խեղաթյուրում են խաղաղ գործընթացի իրողությունները: Հայկական կողմն առաջարկում է կնքել խաղաղության պայմանագիր՝ հիմնվելով ներկայումս համաձայնեցված դրույթների վրա: Սակայն ադրբեջանական կողմը նման մոտեցումն անընդունելի է համարում եւ բազմիցս հայտարարել է այդ մասին: Կա կանոն, որ փաստաթուղթը համաձայնեցված չի համարվում, քանի դեռ դրա բոլոր կետերը համաձայնեցված չեն», - հայտարարել է նա:

Ըստ Հաջիզադեի, «նախագծի շուրջ բանակցություններն ընթանում են դռնփակ, կարելի է միայն ասել, որ այս պահին դրույթների մոտավորապես 80 տոկոսը համաձայնեցված է»:

«Անհնար է պարզապես բացառել անհամապատասխան կետերը: Որպեսզի խաղաղ համաձայնագիրը կայուն եւ հաջողակ լինի, անհրաժեշտ է հստակեցնել մի շարք խնդրահարույց հարցերը: Ընդհանուր առմամբ, համաձայնագրի նախագիծը ստորագրելու համար Հայաստանը նախ պետք է համապատասխան փոփոխություններ կատարի իր Սահմանադրության մեջ, որը ներկայումս տարածքային պահանջներ է պահպանում Ադրբեջանի նկատմամբ: Քանի դեռ Հայաստանի օրենսդրական ակտերից չեն բացառվել այդ պնդումները, երկու երկրների միջեւ խաղաղության մասին խոսք լինել չի կարող», - հայտարարել է նա:

Հիշեցնենք, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մի քանի անգամ առաջարկել է Բաքվին ստորագրել իբրեւ խաղաղության համաձայնագիր այն կետերը, որոնք համաձայնեցված են: Ըստ Փաշինյանի, նախագծում կա 17 դրույթ, որոնցից ամբողջապես համաձայնեցված են 13-ը, եւս 3-ը մասամբ են համաձայնեցված, եւ կա անհամաձայնություն մեկ կետի շուրջ:

«ԱՔԱԿՑՈՒՄ» ԵՆ

Վաշինգտոնը միշտ էլ առիթներ է փնտրում Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպման համար: Այս մասին լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը՝ պատասխանելով հարցին՝ արդյոք ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հեռախոսազրույցներից հետո ակնկալում է եւս մի հանդիպում կազմակերպել Նյու Յորքում:

«Մենք շարունակում ենք աջակցել երկու երկրների՝ կայուն եւ արժանապատիվ խաղաղության համաձայնագրի հասնելուն ուղղված ջանքերին: Նրանք զգալի առաջընթաց են գրանցել խաղաղության համաձայնագրի վերջնական ձեւակերպման ուղղությամբ, եւ մենք պարտավորվում ենք ամեն կերպ աջակցել կողմերին, այդ թվում՝ հանդիպում հրավիրել, եթե դա օգտակար կլինի», - ասել է Միլլերը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԽԱՂԱՂ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցն անհրաժեշտ է համարում ուսումնասիրել Ուկրաինայում խաղաղ գործընթաց սկսելու հնարավորությունները: Այս մասին նա լրագրողներին ասել է Աստանա կատարած այցի ժամանակ:

Շոլցը հավաստիացրել է, որ Գերմանիան կշարունակի աջակցել Կիեւին: «Մեզ համար պարզ է նաեւ, որ միեւնույն ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել իրավիճակի խաղաղ զարգացման հնարավորությունները», - նշել է նա:

Ըստ Շոլցի՝ ժամանակն է տեսնելու, թե ինչն է հնարավոր:

Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցն անհրաժեշտ է համարում ուսումնասիրել Ուկրաինայում խաղաղ գործընթաց սկսելու հնարավորությունները: Այս մասին նա լրագրողներին ասել է Աստանա կատարած այցի ժամանակ:

Շոլցը հավաստիացրել է, որ Գերմանիան կշարունակի աջակցել Կիեւին: «Մեզ համար պարզ է նաեւ, որ միեւնույն ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել իրավիճակի խաղաղ զարգացման հնարավորությունները», - նշել է նա: Ըստ Շոլցի՝ ժամանակն է տեսնելու, թե ինչն է հնարավոր:

ՀԱՐՎԱԾԵԼ Է «ՀԸԶԲՈԼԼԱՀ»-Ի ԶԵՆՔԻ ՊԱՀԵՍՏՆԵՐԻՆ

Իսրայելի ռազմաօդային ուժերը հարվածների շարք են իրականացրել Լիբանանի հարավային շրջանների ուղղությամբ: Թիրախները եղել են շիական «Հըզբոլլահ» շարժման զինված կազմավորումների օբյեկտները: Այս մասին հայտնում է երկրի բանակի մամուլի ծառայությունը:

Ծառայության տեղեկություններով՝ հարվածների թիրախը եղել են շիական կազմավորումների տարբեր ռազմական ենթակառուցվածքներ, այդ թվում՝ զենքի պահեստներ:

Հարվածները հասցվել են Լիբանանի հարավում գտնվող Բլիդա, Քֆար Շուբա, Թեյր Հարֆա եւ Էլ-Էդեյսե բնակավայրերի մերձակայքում:

ՄԻՆՉԵՎ 20 ՏԱՐՎԱ ՊԱՏԻԺ

ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի դեմ մահափորձի մեջ կասկածվող անձին սպառնում է մինչեւ 20 տարվա ազատազրկում եւ 500 հազար դոլար տուգանք՝ հրազեն պահելու արգելքը խախտելու համար:

Ինչպես փոխանցում է «ՌԻԱ Նովոստին», այս մասին նշված է հարուցված համապատասխան քրեական գործի մեջ:

«Հայցվորը հարգանքով հայտարարում է դատարանին, որ Ռայան Ուեսլի Ռութին մեղադրանք առաջադրելու հավանական պատճառ կարող է հանդիսանալ դատապարտված հանցագործի կողմից հրազեն եւ զինամթերք պահելու օրենքների խախտումը», - ասվում է հետաքննությունը վարող Հետախուզության Դաշնային Բյուրոյի կողմից Ֆլորիդայի դատարանին ուղղված հայտարարության մեջ:

ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԿՈՒՏԱԿՎԵԼՈՒ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

ԹՈՇԱԿԱՌՈՒ ԴԱՌՆԱԼՈՒՆ ՊԵՄ՝ ԿԴԱՌՆԱՔ ՄԻԼԻՈՆԱՏԵՐ

2014 թվականից Հայաստանում ներդրված կուտակային կենսաթոշակային համակարգի արդյունքում որոշ քաղաքացիներ, կենսաթոշակային տարիքին հասնելուն պես, կարող են դառնալ միլիոնատեր:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆոնդերի մասնաբաժինների զուտ ակտիվների արժեքը ՀՀ-ում կազմել է 799.2 միլիարդ ՀՀ դրամ: 2024 թվականի ապրիլի 30-ի դրությամբ այն կազմել է ավելի քան 882 մլրդ դրամ:

Մինչեւ 500 հազար դրամ աշխատավարձի դեպքում պարտադիր կենսաթոշակային վճարների՝ սոցիալական վճարների դրույքաչափերը հետեւյալ ժամանակագրությունն են ունեցել. 2020 թ. հունվարի 1-ից՝2.5%, 2021թ. հունվարի 1-ից՝ 3.5%, 2022-ի հունվարի 1-ից՝ 4.5%, 2023-ի հունվարի 1-ից՝5%:

Եթե աշխատողի աշխատավարձը գերազանցում է ամսական 500 հազար դրամը եւ մինչեւ 1 մլն 125 հազար դրամի միջակայքում է, ապա 2023 թվականից սոցվճարը հաշվարկվում է այսպես՝ պետական բյուջեից մասնակցի համար կատարվող ամսական վճարը կազմում է 25 000 դրամ:

Հարց է առաջանում՝ օրինակ, մահացության դեպքում, մահացածի կուտակային կենսաթոշակի հետ ի՞նչ է լինում:

Մահացած մասնակցի կենսաթոշակային ֆոնդերը ժառանգի կողմից ժառանգելու համար անձը ներկայացնում է ժառանգված կենսաթոշակային ֆոնդի մասնաբաժինները ստանալու դիմումը: Վերջինիս հետ միաժամանակ ժառանգը պարտադիր ներկայացնում է նաեւ նոտարի կողմից տրամադրված ժառանգության վկայագրի պատճեն:

Իսկ արդյոք կարո՞ղ եք ստանալ կուտակային կենսաթոշակային վճարը մինչեւ կենսաթոշակային տարիքը լրանալը:

Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը, կարող եք ներկայացնել Ձեր կուտակային կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջությամբ ստանալու պահանջ, եթե առկա է հետեւյալ պայմաններից որեւէ մեկը՝

Դուք օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ, կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված հիվանդություններով հիվանդանալու (վիճակներում գտնվելու) դեպքում՝ առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տված եզրակացության հիման վրա:

Այս տարի լրանում է Հայաստանում ներդրված կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման 10-ը տարին: Ստացվում է, որ այս տասը տարում, մարդկանց մի մասն ավտոմատ դարձել է միլիոնատեր, եւ կենսաթոշակային տարիքը լրանալուն պես՝ կարող է դառնալ միլիոնատեր թոշակառու:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿՓՈԽԱՐԻՆԻ ԱՐՇԱԿՅԱՆԸ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը կարգադրություն է ստորագրել. «Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ հաշվի առնելով Ազգային ժողովի նախագահի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի Կ-230-Ա կարգադրությունը՝ կարգադրում եմ.

1. 2024 թվականի սեպտեմբերի 17-19-ը Ազգային ժողովի նախագահի պարտականությունների ժամանակավոր կատարումը հանձնարարել Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանին»:

ԿՐԿԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՊԱՀԱՆՋ Է ԴՐԵԼ

Տարածաշրջանում արդեն խաղաղություն կա, բայց խաղաղության պայմանագրի համար կարեւոր է, որ ՀՀ-ն վերջ դնի իր Սահմանադրությամբ Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջներին: Այս մասին ԱՄՆ պետքարտուղար Անտոնի Բլինքենի հետ հեռախոսազրույցի ժամանակ ասել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Պայմանագրի ստորագրման համար կարեւոր է, որ Հայաստանն իր Սահմանադրությամբ եւ այլ օրենսդրական ակտերով վերջ դնի Ադրբեջանի դեմ տարածքային հավակնություններին, ինչպես նաեւ դադարեցվի անցյալի մասունք հանդիսացող ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ դրա հետ կապված բոլոր ինստիտուտների գործունեությունը» , - ասել է Ալիեւը:

Ի ՀԻՇԱՏԱԿ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՂԵՏԻՑ ՁՈՀՎԱԾ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

Ս.թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 13:00-ին, Երեւան քաղաքի Կոմիտաս փողոցի Սուրբ Խաչ եկեղեցում կկատարվի հոգեհանգստյան կարգ՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետեւանքով նահատակված ու սեպտեմբերի 25-ին Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհի նավթամթերքի պահեստում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհված մեր հայրենակիցների հոգիների խաղաղության համար: Այդ մասին հայտնում են Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմից.

«Կոչ ենք անում միահամուռ կերպով մեր աղոթքները վերառաքենք Ամենակարող Տիրոջը, որ Նա խաղաղություն տա ննջեցյալների հոգիներին ու մխիթարություն բերի նրանց ընտանիքներին եւ մեր ազգին՝ մեր ունեցած կորուստների համար:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«Մայր Հայաստան» դաշինքի պատվիրակությունը՝ Անդրանիկ Թեւանյանի գլխավորությամբ, հանդիպել է Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության ղեկավար Դենիս Պուշիլինի հետ: Այս մասին տեղեկանում ենք «Մայր Հայաստան» շարժման ֆեյսբուքյան էջից:

Անդրանիկ Թեւանյանը եւ Դենիս Պուշիլինը փոխանակվել են հուշանվերներով:

Պատվիրակության կազմում են «Մայր Հայաստան» շարժման առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը, Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը, «Մայր Հայաստան» շարժման նախաձեռնող խմբի անդամ Բորիս Մուրազին եւ Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամներ Սամվել Հակոբյանն ու Գրիգոր Իսկանդարյանը:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ԲՈՂՔԱՐԿՎԵԼ Է Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ

ArmLur.am-ին երեկ հայտնի դարձավ, որ Գլխավոր դատախազությունը արդարացման որոշումը բողոքարկել է հակակոռուպցիոն դատարան:

2024 թվականի մայիսի 31-ին Երևանի ընդհանուր իրավասության դատարանը հրաժարակել էր ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գործով դատավճիռը, որով Սարգսյանն արդարացվել է:

Սերժ Սարգսյանը մեղադրվում էր 2013 թ. պաշտոնատար մի խումբ անձանց կողմից, պետությունից վատնելու եղանակով, 489 մլն 160 հազար դրամի հափշտակության կատարումը կազմակերպելու մեջ:

Գործը վերաբերում է վառելիքի մատակարարման գործընթացում ենթադրյալ չարաշահումներին: Գործով ի սկզբանե ամբաստանվում էր 5 անձ: Նրանցից 4-ին՝ Սերժ Սարգսյանին, «Ֆլեշ» ընկերության նախկին սեփականատեր Բարսեղ Բեգլարյանին, գյուղատնտեսության նախկին փոխնախարար Սամվել Գալստյանին եւ նույն նախարարության Բուսաբուծության վարչության պետ Գեւորգ Հարությունյանին մեղադրանք էր առաջադրվել Քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով յուրացումը կամ վատնումը կազմակերպելը, դրդելը, օժանդակելը), իսկ գյուղատնտեսության նախկին նախարար Սերգո Կարապետյանին՝ 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով յուրացումը կամ վատնումը):

Գործի քննության ընթացքում Սամվել Գալստյանն ու Սերգո Կարապետյանը մահացել էին, եւ նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել էր:

Իսկ «Ֆլեշ» ընկերության սեփականատեր Բարսեղ Բեգլարյանը եւ Բուսաբուծության վարչության պետ Գեւորգ Հարությունյանը եւս արդարացվել են:

Նշենք, որ գործի վաղեմության ժամկետն անցել էր, ինչը եւս հիմք էր մեղադրական դատավճիռ չկայացնելու համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՏԱՐԱՋԳԻՆԵՐ ԵՆ ԵՂԵԼ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ՝ ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՇՐՋԱՆԱՌՄԱՆ ԳՈՐԾՈՎ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով քննվող քրեական վարույթի շրջանակներում կատարված ծավալուն քննչական եւ համատեղ օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել են Հնդկաստանի Հանրապետության երկու քաղաքացու կողմից խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներով, իրացնելու նպատակով ապօրինի կերպով a-PVP տեսակի թմրամիջոց ձեռք բերելու, ապօրինի տեղափոխելու եւ պահելու դեպքի՝ քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ:

«Ձեռնարկված ապացուցողական գործողություններով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ նշված անձինք թվով 120 տարբեր գույնի կպչուն ժապավեններով փաթեթավորված թմրամիջոցներ են ձեռք բերել, որոնց մի մասի հետազոտությամբ դրանք եղել են ընդհանուր առանձնապես խոշոր չափերով՝ 8,22 գրամ քաշով, «a-PVP» տեսակի թմրամիջոց:

Մասնավորապես՝ անձնական խուզարկությամբ հիշյալ անձանցից մեկի մոտ հայտնաբերվել է 30 տարբեր գույնի կպչուն ժապավեններով փաթեթներ, իսկ Երեւան քաղաքի Ֆանարջյան փողոցում գտնվող Զեյթունի գերեզմանատան ավտոճանապարհի մայթեզրին կից խոտածածկ տարածքում կատարված դեպքի վայրի զննությամբ՝ 90 տարբեր գույնի կպչուն ժապավեններով փաթեթներ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա վերոհիշյալ անձանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ առաջադրվել մեղադրանք:

Վարույթ իրականացնող մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ վերջիններիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին, որոնք բավարարվել են:

Նախաքննությունը շարունակվում է»,- ասված է ՔԿ հաղորդագրության մեջ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎՐԱԵՐԹ

Սեպտեմբերի 14-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Արմավիրի մարզում: Ժամը 19:30-ի սահմաններում Արմավիրի բնակիչ 32-ամյա Արման Պ-ն, նախկին պատգամավոր, երջանկահիշատակ Հակոբ Հակոբյանի (Ճոյտ) եղբոր փեսան, իր վարած «ՎԱԶ 2121» մակնիշի ավտոմեքենայով Զվարթնոց գյուղի Թ. Թորոմոնյան փողոցում վրաերթի է ենթարկել Արմավիրի մարզի բնակիչ 3-ամյա Ռաֆիկ Մ-ին: Ականատեսները ArmLur.am-ին պատմեցին, որ երեխան անճանաչելի էր դարձել: Ողբերգությունից հետո, ցավոք, տարբեր մեկնաբանություններ ու շահարկումներ եղան, նույնիսկ ծնողական անուշադրության որակումներ:

Իսկ ինչպես է դեպքը տեղի ունեցել իրականում:

Նախ պետք է շեշտել, որ վերը նշված ժամանակահատվածում տարածքը մշտապես բազմամարդ է լինում: Բնակիչները հաստատում են, որ այգին բարեկարգելուց հետո, երեկոյան ժամերին այնտեղ երեխաների պակաս չի զգացվում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ բնակելի այդ հատվածում թույլատրված է մեքենաների նվազագույն արագություն, իսկ ճանապարհի լայնքով թմբեր են կառուցված:

Դժբախտացած ընտանիքի տան եւ այգու միջեւ տարածությունը մի քանի մետր է. երեխաները մշտապես տանից այգի եւ այգուց տուն են վազվզում՝ ընտանիքի որեւէ մեծահասակ անդամի ուղեկցությամբ:

Այդ օրն էլ բացառություն չէր...

Մինչ փոքրիկի հորաքույրը ակնթարթորեն նկատել է արագ սլացող մեքենան, դեպի երեխան վազելով՝ կանչել է, որպեսզի կանգնի, հորաքրոջ աչքի առաջ վարորդը հարվածել է երեքամյա փոքրիկին ու մի փոքր հատված առաջ շարժվել:

Ավելին՝ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ քննությամբ արգելակների հետագիծ, արգելակման որեւէ նշան չի հայտնաբերվել. թերեւս պատճառը վարորդի հավաքած արագությունն է եղել, քանի որ հորաքույրը չի հասցրել կանգնեցնել երեխային ու կանխել դժբախտությունը...

Ականատեսները ArmLur.am-ին պատմեցին, որ վարորդը մեքենայում ուղեւորի հետ է եղել, որն էլ մեքենայից շտապ իջել եւ գրկել է երեխային: Տեսնելով փոքրիկի այլափոխված գլուխը՝ սարսափահար հետ է դրել գետնին, ապա օգնել է երեխային տեղափոխել «Վաղարշապատ» բժշկական կենտրոն:

Մինչ ԲԿ հասնելը՝ երեխան մահացած է եղել:

Քննության շահերից ելնելով՝ վարորդի որոշ ինքնախոստովանական ցուցմունքներ չենք նշի, սակայն պետք է շեշտել, որ միայն շատ ուժեղ հարվածի դեպքում երեխան այդ աստիճան ծանր մարմնական վնասվածք կարող էր ստանալ. թեեւ վարորդը հայտարարել է, թե իրեն թվացել է՝ քար ընկավ մեքենայի անիվի տակ: Հաշվի առնելով փոքրիկի հարազատների վիշտը՝ այլ մանրամասներ չենք նկարագրում:

Հիշեցնենք, որ Shamshyan.com-ը գրել էր, որ սեպտեմբերի 14-ին մահվան ելքով վրաերթ է տեղի ունեցել Արմավիրի մարզում: Ժամը 19:30-ի սահմաններում Արմավիրի մարզի բնակիչ 32-ամյա Արման Պ-ն իր վարած «ՎԱԶ 2121» մակնիշի ավտոմեքենայով Զվարթնոց գյուղի Թ. Թորոմանյան փողոցում վրաերթի է ենթարկել Արմավիրի մարզի բնակիչ 3-ամյա Ռաֆիկ Մ-ին:

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ

Տեւական ժամանակ է՝ համացանցը քննարկում է արդարադատության նորանշանակ փոխնախարար Սիրվարդ Գեւորգյանի մեղայականը:

Հիշեցնենք, որ նա ավարտել է իրավաբանական ֆակուլտետը եւ ոչ միայն սովորել է նույն կուրսում Ռոբերտ Քոչարյանի դստեր հետ, այլեւ շատ մտերիմ հարաբերություններ է ունեցել նրա հետ: Փոխնախարարի նշանակումից հետո համացանցում են հայտնվել Սիրվարդ Գեւորգյանի, Գայանե Քոչարյանի լուսանկարները. նկարներում Գեւորգյանը կրծքին սեղմած պահել է Ռոբերտ Քոչարյանի գիրքը, սակայն հետո նորաթուխ փոխնախարարը հանդես է եկել մեղայականով, մոտավորապես այն բովանդակությամբ, թե՝200 այլ ուսանողների հետ եմ սովորել, նրանցից մեկն էլ Քոչարյանի դուստրն էր, իսկ ես «սռսուռ ՔՊ-ական եմ եւ շատ եմ սիրում Նիկոլ Փաշինյանին»:

Այսօր ArmLur.am-ը ԲԴԽ-ում փոխնախարար Սիրվարդ Գեւորգյանին հարցեր ուղղեց այն մասին, թե իր նշանակումը միանշանակ չընդունվեց իշխող քաղաքական թիմի կողմից, Անդրանիկ Քոչարյանը եւ էլի մի քանիսը մտահոգված են, ինչպես է նա արձագանքում այս վերաբերմունքին:

Հարցրինք՝ «Ռոբերտ Քոչարյանի գիրքը գրկելը, ջերմ լուսանկարը նրա դստեր եւ ՀՀԿ-ական Արփինե Հովհաննիսյանի հետ, փաստորեն, բացասական ընկալում են առաջացրել Ձեր նկատմամբ. շփում կամ նրանց հետ եւ այդքան հեշտ հրաժարվո՞ւմ եք Ձեր ընկերներից հանուն բարձր պաշտոնի» *(Զրույցը՝ ArmLur.am կայքում)*:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 16-ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 92 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԱՎՈՒՇՈՒՄ ՏՐՎԵՑ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը սեպտեմբերի 6-ին որոշում է ընդունել, որ «Հայաստանի Հանրապետության Լոռու եւ Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրեւներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետեւանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝2024թ. հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշման համաձայն՝Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն գյուղի բնակիչ Դավիթ Հարությունյանին աղետի հետեւանքով անհատական բնակելի տանը պատճառված վնասի փոխհատուցման նպատակով տրամադրի 3 միլիոն 200 հազար դրամ: Մեր թղթակիցը զանգահարեց Բագրատաշեն գյուղի վարչական ղեկավար Սարգիս Անտոնյանին, նա հայտնեց, որ մայիսի 27-ին վարարած Դեբեդը գետը Բագրատաշեն գյուղում հեղեղել է Դավիթ Հարությունյանի տունը՝ մեծ վնաս պատճառելով տանը, այնտեղ եղած գույքին: Վարչական ղեկավարն ասաց, որ Դավիթ Հարությունյանը Բագրատաշենում առաջինն է, ով հեղեղից վնասված տան համար փոխհատուցում է ստացել, առաջիկայում եւս 3 ընտանիք կստանա դրամական փոխհատուցում, դրա համար պահանջվող փաստաթղթերը այդ ընտանիքները ներկայացրել են: Ս. Անտոնյանն ասաց, որ հեղեղից վնասվել են Բագրատաշենի 6 ընտանիքների տները, որոնցից 4-ը կստանա դրամական փոխհատուցում, մնացած ընտանիքներից մեկը արտերկրում է բնակվում, մյուս տան համար փաստաթղթային խնդիրներ գոյություն ունեն: Վարչական ղեկավարն ասաց, որ դրամական փոխհատուցումը տրվում է տան առավելագույնը 80 քառակուսի մետրի համար, մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝40 հազար դրամի չափով: Ըստ՝ Ս. Անտոնյանի՝ հաջորդ փուլում դրամական փոխհատուցում կստանան ջրհեղեղից տուժած հողամասերի տերերը: Բագրատաշենում հեղեղից վնասվել են հիմնականում տնամերձ հողամասերը, որոնք ոչ մեծ չափերի են. գյուղում միայն երկու մեծ հողատարածք է ջրհեղեղից վնասվել:

ՀԱՆՁՆՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ «ԳՈՒԳԼ»–ՈՎ

Վերջերս Իջեւան քաղաքից մեր թղթակցի ծանոթը պետք է մեքենայով գար գնար նրան հանդիպելու թղթակցի հայրական տանը՝ Նոյեմբերյան համայնքի Ոսկեվան գյուղում: Նա առաջին անգամ էր լինելու սահմանամերձ Ոսկեվան գյուղում, ճանապարհին ծանոթ չէր: Իջեւանից մեր թղթակցին զանգահարեցին, թե «Գուգլ»-ը Կիրանց-Ոսկեպար ճանապարհի կեսը Ադրբեջանի տարածք է ցույց տալիս ու «խորհուրդ տալիս» Իջեւանից Նոյեմբերյան մեկնել Ալավերդիով, այդ ճանապարհն էլ ավելի քան 150 կիլոմետր է:

Ստացվում է՝ սահմանազատման անվան տակ, միակողմանի կերպով, զիջում, տարածքներ են հանձնում նաեւ Գուգլ-ով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության միջեւ այսօր տեղի է ունեցել փաստաթղթերի ստորագրման արարողություն՝ ուղղված ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ֆրանսերենի դասավանդման խթանմանը եւ զարգացմանը:

Փաստաթղթերը ստորագրել են ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ու ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյին:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, նախարարության եւ դեսպանության աշխատակիցներ:

Ժաննա Անդրեասյանը, ողջունելով ԿԳՄՍ նախարարության եւ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության միջեւ արդյունավետ համագործակցության հերթական փուլը, նշել է՝ մեկնարկելիք ծրագիրն ամբողջությամբ համահունչ է հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին:

«Հանրակրթության նոր չափորոշչով մենք դպրոցներում օտար լեզուների իմացությունը բարելավելու խնդիր ենք դրել: Կարեւորում եմ այն ջանքերը, որ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության հետ հետեւողականորեն ներդնում ենք՝ ֆրանսերենի իմացության բարելավման ուղղությամբ: Ծրագրի շրջանակում դպրոցներում ներդրվելու են ֆրանսերենի ուսուցման նոր ծրագրեր, օգտագործվելու են նոր դասագրքեր եւ ուսումնական նյութեր, ինչպես նաեւ մեծ աշխատանք է տարվելու ուսուցիչների կարողությունների զարգացման ուղղությամբ՝ ձեւավորելով վերապատրաստող ուսուցիչների խումբ»,- ասել է ԿԳՄՍ նախարարը:

Ժաննա Անդրեասյանն ընդգծել է՝ տարիների ընթացքում ֆրանսերեն դասավանդող ուսուցիչների կազմակերպված համայնք է ձեւավորվել, որին նպաստել են նաեւ Ֆրանսիայի դեսպանության հետ համագործակցությամբ իրագործվող ծրագրերը:

«Հուսով եմ՝ նոր ծրագրի առաջին շահառուները՝ սովորողների հետ միասին, կլինեն նաեւ ուսուցիչները»,- ասել է նախարարը:

Նրա խոսքով՝ կիստակեցվի ֆրանսերենի խորացված ուսուցման ծրագրերով աշխատող դպրոցների ցանկը, որում այս պահին ընդգրկված է 19 դպրոց, սակայն դրանց թիվը կարող է ավելանալ՝ հաշվի առնելով, որ նոր ծրագրերը մեծ հետաքրքրություն կներկայացնեն նաեւ այլ դպրոցների շրջանում:

Շնորհակալություն հայտնելով ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատանը՝ Ժաննա Անդրեասյանն ընդգծել է՝ ֆրանկոֆոն միջավայրը բարելավելու ՀՀ ջանքերն ուղղված են ֆրանկոֆոնիայի երկրների շարքում մեր երկրի՝ ավելի կայուն եւ զարգացող ներկայացվածության ապահովմանը:

«2027 թվականին մեր երկիրը հանձնառություն է ստանձնել հյուրընկալելու Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային մարզամշակութային խաղերը: Հատկապես նպատակուղղված ենք բարելավելու ֆրանկոֆոն միջավայրը, ինչպես նաեւ ընդլայնելու ու տարածելու ֆրանսերենի իմացությունն այս մեծ օրակարգի շրջանակում»,- եզրափակել է Ժաննա Անդրեասյանը:

ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյին շնորհակալություն է հայտնել կրթության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում համագործակցության համար: Նրա խոսքով՝ Հայաստանի՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանն անդամակցությունը ռազմավարական նշանակություն ունի:

«Ֆրանսիայի դեսպանությունը պատրաստ է տարբեր մարզամշակութային միջոցառումներ կազմակերպելու փորձառությամբ կիսվել Հայաստանի հետ՝ 2027 թվականին կայանալիք Ֆրանկոֆոնիայի 10-րդ խաղերին ընդառաջ: Մեզ համար դեռ վառ է 2018 թվականին Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովը Հայաստանում անցկացնելու հետ կապված հիշողությունը: 10 օրից Ֆրանսիայում տեղի կունենա Ֆրանկոֆոնիայի հերթական գագաթնաժողովը: Ֆրանկոֆոնիան մեր երկրների միջեւ շատ առանձնահատուկ կապ եւ տարբեր ուղղություններով համագործակցության հնարավորություններ է ստեղծում»,- ասել է դեսպան Օլիվիե Դըկոտինյին:

Դեսպանն ընդգծել է նաեւ ոչ միայն Երեւանում, այլեւ Հայաստանի Հանրապետության մարզերում ֆրանսերենի ուսուցման տարածման անհրաժեշտությունը: Նա տեղեկացրել է՝ նախագծի շրջանակում Ֆրանսիան 600 հազար եվրո է ներդնելու՝ Հայաստանում ֆրանսերենի ուսուցման որոկի բարելավման եւ սովորողների կարիքների աջակցման նպատակով:

Դեսպանի խոսքով՝ ծրագիրը նախեւառաջ աջակցելու է ֆրանսերենի ուսուցման ջատագովներին՝ ուսուցիչներին:

«Հնարավորություն եմ ունեցել Հայաստանի հեռավոր քաղաքներում եւ գյուղերում հանդիպելու ֆրանսերեն դասավանդող ուսուցիչների, որոնք առանձնահատուկ սեր են տածում ֆրանսիական մշակույթի, գրականության եւ լեզվի հանդեպ ու շատ լավ գիտեն, թե ինչպես փոխանցել այդ սերը: Նախագծի նպատակն է նաեւ ֆրանսերեն դասավանդող ուսուցիչների համար մանկավարժական վերապատրաստումներ իրականացնել՝ նրանց զինելով նոր մեթոդաբանությամբ: Մեր մյուս նպատակը ֆրանսերենի խորացված ուսուցման ցանցի ընդլայնումն ու սովորողների կարիքների բավարարումն է: Վստահ եմ՝ միասին կկարողանանք մեծացնել ֆրանսերենի գրավչությունը» - նշել է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանն ու շնորհակալություն հայտնել ֆրանսերենի զարգացման ու տարածման հարցում ներդրվող ջանքերի ու հետաքրքրության համար:

Ա. Ս.

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾ ԱՐՏԱՀՈՍՔ՝ «ԹԵՄՈՒ» ԿԱՅՔԻՑ

Անձնական Տվյալների պաշտպանության գործակալությունը հայտարարություն է տարածել.

«Temu առցանց առեւտրի խանութից օգտվողներին խորհուրդ է տրվում փոխել գաղտնաբառը՝ անվտանգության նկատառումներից ելնելով»:

Հիշեցնենք, որ գրել էինք՝ վերջերս առեւտրային բում առաջացրած Temu օնլայն շոփից արդեն հաստատված անձնական տվյալներ են արտահոսել:

Մեդիափորձագետ Սամվել Մարտիրոսյանը գրում է. «Հիշո՞ւմ եք, մի շաբաթ առաջ «Թեմու»-ի մասին էի գրել՝ անձնագրի տվյալների վերաբերյալ: Խոսում էի արտահոսքի վտանգի մասին. ահա այդ արտահոսքը եղավ. մանրամասները ներկայացնում է Լեւոն Իսաջանյանը»:

CayberHuab-ի ինժեներ Լեւոն Իսաջանյանը գրում է. «Ես ինչպես հասկանում եմ՝ Հայաստանի Հանրապետությունում օգտագործում են temu պլատֆորմը օնլայն առեւտրի համար:

Threat Actor-ը կարողացել է էքսֆիլտրացնել 87 միլիոն հաճախորդի տվյալ, որտեղ նշված է, որ այնտեղ կան նաեւ Հայաստանի Հանրապետության օգտատերերի տվյալներ. եւ ինչպես հասկանում եմ՝ արտահոսել է UserId, Username, e-mail, address, IP address, Gender, Phone Number, DOB: Կան այլ տվյալներ, որոնք գտնվում են Boolean մակարդակում, ինչը հնարավոր չէ իդենտիֆիկացնել՝ մինչ չլինի ամբողջ տվյալների շտեմարանը»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար, 17 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2024 թ. հոկտեմբերի 2-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 52 լոտ՝ ոսկյա զարդեր 9,2 գր. ընդհանուր քաշով, որից 5,5 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 500 հարգի՝ 85,400 ՀՀ դրամ, 3,7 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 585 հարգի՝ 68,200 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 153.600 ՀՀ դրամ: Թիվ 53 լոտ՝ ոսկյա զարդեր 9,1 գր. ընդհանուր քաշով, որից 4,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 750 հարգի՝ 96,700 ՀՀ դրամ, 5 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 585 հարգի՝ 92,000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 188,700 ՀՀ դրամ: Թիվ 54 լոտ՝ ոսկյա զարդ 7,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7,2 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 132.700 ՀՀ դրամ: Թիվ 55 լոտ՝ ոսկյա զարդ 5.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 5.3 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝97,700 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝ վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00, ք. Երեւան՝ Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է. պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.՝ +374 43 00 42 27

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ԳՆԱՃ

Աշխարհի խոշորագույն հումքային բորսաների սեպտեմբերի 16-ի առեւտրային նստաշրջանների արդյունքում սահմանվել են նավթի հետեւյալ գները.Նյու-Յորքի NYMEX (New York Merchantile Exchange) բորսա՝ WTI (Light Sweet) տեսակի նավթի գինն աճել է 2.29%-ով եւ կազմել 70.57 դոլար: Լոնդոնի ICE (InterContinental Exchange Futures) բորսա՝ Brent տեսակի նավթի գինն աճել է 1.74%-ով եւ կազմել 73.07 դոլար:Նավթի չափման միավորը բարելն է: Մեկ բարելը կազմում է 158.98 լիտր: Նյու Յորքի NYMEX-ն (New York Merchantile Exchange) ամերիկայն ֆյուչերսային բորսա է, որը հիմնադրվել է 1882 թվականին եւ զբաղեցնում է առաջին տեղը նավթային ֆյուչերսների առեւտրում: Ներկայումս առեւտուրը շարունակվում է երկու բորսայական միավորներով՝NYMEX-ի՝նավթի, գազի, պլատինի, պալադիումի, էթանոլի, ածխի, էլեկտրաէներգիայի եւ ածխածնի երկօքսիդի արտանետումների եւ COMEX-ի ոսկու, արծաթի, պղինձի, ալյումինի ուղղություններով: London Intercontinental Exchange (ICE)-ը Լոնդոնյան համաշխարհային ֆինանսական ֆյուչերսների եւ ընտրանքների բորսան է, որը հիմնադրվել է 1982 թվականին:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

ՀԴՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024 թվականի օգոստոս ամսվա ընթացքում արձանագրվել են հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման 345 դեպք եւ շուրջ 126 մլն դրամի չափով տուգանք: Արձանագրված խախտումներից 11 դեպքով 11 հարկ վճարողի մոտ արձանագրվել է 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք՝ ընդհանուր շուրջ 41.2 մլն դրամի չափով:

Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման դեպքերով 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք արձանագրվել է փաստացի գործունեության հետեւյալ ոլորտներում.

- հացի կամ հացաբուլկեղենի արտադրության, կենցաղային կամ համակարգչային տեխնիկայի խանութի, հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի, մթերային խանութի, հագուստի, կոշիկի եւ գործվածքների առեւտրի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 2.3 մլն դրամ տուգանք,
- հացի կամ հացաբուլկեղենի արտադրության, մթերային խանութի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 10 մլն դրամ տուգանք,
- հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 1.15 մլն դրամ տուգանք,
- հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի, ավտոգազալցակայանի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 1.6 մլն դրամ տուգանք,
- մթերային խանութում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 2.1 մլն դրամ տուգանք,
- մթերային խանութի, առեւտրի իրականացման վայրի կազմակերպման ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 2.84 մլն դրամ տուգանք,
- մթերային խանութ, բանկային, վարկային, ապահովագրական կամ այլ ֆինանսական գործունեության ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 10 մլն դրամ տուգանք,
- մրգի եւ բանջարեղենի առեւտրի ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 1.66 մլն դրամ տուգանք,
- շինանյութի առեւտրի ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 2.9 մլն դրամ տուգանք,
- բանկային, վարկային, ապահովագրական կամ այլ ֆինանսական գործունեության, ոսկերչության, թանկարժեք քարերի մշակման, տնտեսական ապրանքների խանութի, մթերային խանութի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 5.64 մլն դրամ տուգանք,
- այլ ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 1 մլն դրամ տուգանք:

ՀՀ ՊԵԿ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ Կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են 2025 թվականի պետական բյուջեի նախագիծն ու հարկաբյուջետային շրջանակը:

Վարչապետի աշխատակազմից հայտնում են, որ ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը նախ ներկայացրել է տնտեսական եւ հարկաբյուջետային ընթացիկ զարգացումները, բյուջեի մակրոտնտեսական շրջանակը, որոնց հիման վրա մշակվել է պետբյուջեի նախագիծը: Մանրամասներ են ներկայացվել ոլորտային ծախսերի եւ ըստ գերատեսչությունների առաջարկվող չափաքանակների վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաեւ ՀՀ Կառավարության առաջնահերթություններին եւ նպատակադրումներին, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավմանը, հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումներին:

2025թ. պետական բյուջեի նախագծի առնչությամբ ծավալվել է մտքերի փոխանակություն, ներկայացվել են մի շարք հարցադրումներ եւ առաջարկություններ:

Նիկոլ Փաշինյանն ընդգծել է բոլոր գերատեսչությունների կողմից բյուջեով նախատեսված ծրագրերի եւ միջոցառումների արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը: Ամփոփելով խորհրդակցությունը՝ վարչապետը հանձնարարել է պետբյուջեի նախագիծը բերել վերջնական տեսքի՝ հաշվի առնելով խորհրդակցության ընթացքում ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Հայրապետյանի կողմից հաստատված Բուսական ծագման մթերքում մնացորդային նյութերի, գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների առկայության մոնիթորինգային ծրագրի պլանի համաձայն՝ հանրապետության բոլոր մարզերում գյուղացիական տնտեսություններից, պատահական ընտրության սկզբունքով, իրականացվում է բուսական ծագման մթերքների նմուշառում: Մնացորդային նյութերի եւ ԳՁՕ-ների հայտնաբերման համար նմուշառումներ են իրականացվում նաեւ խոշոր արտադրողների մոտ:

ՍԱՏՄ-ից հայտնում են, որ մնացորդային նյութերի հսկողության նպատակով կատարվող փորձաքննությունները Տեսչական մարմնի ենթակայությանը հանձնված «Հանրապետական անասնաբուժասանիտարական եւ բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվելու են ԵԱՏՄ-ում ընդունելի ստանդարտներով եւ մեթոդներով՝ հնարավորինս սեղմ ժամկետներում:

Իրականացվելու է 13 մշակաբույսերի 121 նմուշառում, որոնք ենթարկվելու են 2416 փորձաքննության՝ 1509-ը՝ պեստիցիդների, 696-ը՝ ծանր մետաղների, 192-ը՝ նիտրատների եւ 19-ը՝ ԳՁՕ-ների մասով (խնձոր, դեղձ, ելակ, սալոր, խաղող կարտոֆիլ, լոլիկ, վարունգ, կարտոֆիլ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ (մնացորդային նյութեր) եւ եգիպտացորեն (ԳՁՕ)):

Մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն եւ կներկայացվեն մինչեւ տարվա վերջ:

Լաբորատոր փորձաքննությունների արդյունքների հիման վրա, անհամապատասխանություններ արձանագրած տնտեսությունների, ընկերությունների եւ անհամապատասխանություններով մթերքի նկատմամբ կիրականացվեն օրենքով սահմանված գործողություններ եւ կկիրառվեն պատասխանատվության միջոցներ: Կտարվեն նաեւ խորհրդատվական աշխատանքներ, կներկայացվեն ուղղիչ գործողություններ իրականացնելու առաջարկներ՝ հետագա խախտումները բացառելու նպատակով:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՀՈՎԻԿ ՉԱՐԽՉՅԱՆԻ «ԵՐԿԻՐ ԱՆԱՎԱՐՏ»-Ը

Օրերս լույս տեսավ Հովիկ Չարխչյանի «Երկիր անավարտ» վեպը եւ անմիջապես հայտնվեց ընթերցողների ուշադրության կենտրոնում: Նման հետաքրքրությունն առաջին հերթին պայմանավորված է գրքի բովանդակությամբ, ուր ներկայացվում են մեր ժամանակների խնդիրներն ու մտահոգությունները, հանրային ընկալումների հակասությունները, դժվարին իրավիճակներում ելքեր որոնելու ջանքերը: Դրանք ոչ միշտ են տալիս ցանկալի արդյունքը, բանի որ ավելի հաճախ էականը ստորադասվում է անկարեւորին, անհատի ու երկրի շահերի մերձեցումը չի կայանում: Եվ այս լարված իրադարձություններին համընթաց հեղինակն իր գրքում դիտարկում է բարդ երեւույթների խորքային խմորումներն ու դրանք հրահրող պատճառները:

«Այս վեպը մեզնից յուրաքանչյուրի մասին է»,- ասում է Չարխչյանը:

«Ամեն ոք կարող է գրքում գտնել իրեն՝ ընդհանրությունների ու տարբերությունների խաչման կետերում, կարող է վիճաբանել ու հաշտվել, ընդդիմանալ ու համակերպվել, բայց չի կարող խուսանավել այն պատասխանատվությունից, որ ինքը կրում է երկրի ճակատագրի համար, քանի որ չի գտնելու այնպիսի մի հարթություն, որտեղ երկիրն ու քաղաքացին տարանջատվում են»:

«Երկրի ճակատագիրը կանխորոշում են ոչ թե իրադարձությունները, այլ մարդը», - այս համոզմանն է գրողը: Հովիկ Չարխչյանը գիրքը գրել է 3 ու կես տարում:

Վեպի անվան մեջ «երկիր» բառը, ըստ հեղինակի, երկակի կարելի է հասկանալ՝ երկիր՝տեղային, նեղ իմաստով, եւ երկիր՝ որպես մոլորակ. «Աշխարհը կմնա անկատար ու անավարտ, քանի դեռ դրա հիմքերը ամուր չեն, իսկ հիմնաքարը դնում ենք մենք՝ բոլորս ու յուրաքանչյուրս: Մեր ամեն մի վրիպում խարխլում է մարդկության եւ երկրի մեծ տան պատերի ամրությունը»,- ասում է նա:

«Երկիր անավարտ» վեպի հերոսներն անկեղծ են իրենց մղումներում ու համոզմունքների մեջ, սակայն անկեղծությունը վրիպումների ու սխալների արդարացումը չէ: Եվ պարտության ու նահանջի ժամին նրանք հարկադրված են վերանայելու եւ վերարժեւորելու իրենց անցած ճանապարհը՝ փնտրելով անավարտն ավարտին հասցնելու գլխավոր խորհուրդը, փակ դռները բացող բանալին եւ հարաբերվելով ճշմարտության ճնշող, սակայն ապաքինող ծանրության հետ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՄԱՏԵՂ ԵՐԳ՝ «ՀՐԱՆՏ ԴԻՆՔ» ԵՐԳՉԱԽՄԲԻ ՀԵՏ

Պոլսահայ երգչուհի Սիբիլը, որը միշտ պահպանում է կապը Հայաստանի երկրպագուների հետ, «Հրանտ Դինք» մանկական երգչախմբի հետ համագործակցությամբ երաժշտասերների դատին է հանձնել «Բարի լույս» ստեղծագործությունը: Երգի հիման վրա նկարահանված հոլովակն արդեն համացանցում է:

Սիբիլն ու «Հրանտ Դինք» մանկական երգչախումբը (կազմված է հայաստանցի աշակերտներից) հանդես են գալիս «Մաղթենք բարի լույս, թող բարին հաղթի» կարգախոսով:

«Մայր բնությունն այնքան գեղեցիկ գույներ ու բույրեր է պարգեւել մարդուն՝ գետի շառաչը, երփներանգ ծաղիկների բուրմունքը, անտառի մեղմ խշշոցը, կապույտ երկինքը, սակայն մարդկությունը, տեղի տալով իր եսասիրությանը, կարծես նահանջել է իր կոչումից՝ տեսնել ու վայելել բնության հրաշքները, ձուլվել նրան, դառնալ նրա մի մասնիկը, ինչպես որ նախատեսել էր Արարիչը: Ինքնասիրության պատճառով աշխարհի չորս կողմերում բռնկված բոլոր պատերազմները մերժում ենք «Բարի լույս»-ով, որովհետեւ ամեն մի բարի լույս օրհնանք ու լավատեսություն է, հույս է հաշտություն աղերսող մանուկների համար»,- ասվում է հաղորդագրության տեքստում:

Երգը գրվել է Համո Սահյանի բանաստեղծության հիման վրա: Երաժշտությունը Հրանդ Ճիզմէճեանինն է, գործիքավորողը Մաժակ Թոշիկյանն է, ռեժիսորներն են Հարություն Գեւորգյանն ու Սայաթ Դաղլըյանը:

ԿԻԼԻԿԻԱ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Օրերս «Եվրոպական ժառանգության օրեր»-ի շրջանակում Հայաստանի պատմության թանգարանում տեղի ունեցավ «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի նախագահ, «Կիլիկիա» նավի նավապետ Կարեն Բալայանի բանախոսությունը՝ «Մի առագաստանավի պատմություն. Կիլիկիա» խորագրով:

Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանն իր բացման խոսքում կարեւորեց բանախոսության արդիականությունը «Ճանապարհներ, ցանցեր, կապեր» խորագրի ներքո, եւ Կիլիկիան Հայաստանի նավագնացության ուսումնասիրման անհրաժեշտությունը պատմական հետազոտությունների տեսանկյունից:

Բանախոսն իր ելույթի ընթացքում ներկայացրեց Կիլիկիան Հայաստանի նավատեսակների կառուցման տեխնոլոգիան, ինչպես նաեւ իր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները Կիլիկիան Հայաստանի նավատորմի եւ նավագնացության մասին: Հեղինակը անդրադարձ կատարեց նաեւ մեր օրերում պատմական նավերի վերականգնման ու Սեւանա լճում ստորջրյա հնէաբանական ուսումնասիրությունների իրականացման աշխատանքներին:

Բանախոսությանը հաջորդեց «Կիլիկիա. արարում» ֆիլմի դիտումը:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՆ ՏԱՃԱՐԻ ՎՆԱՍՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ

Մայր Տաճարի զանգակատան առաստաղին քանդակազարդ հատվածներ կան: Դրանք եւ Պողոս, Պետրոս առաքյալների պատկերները վնասված են, որոնք այս պահին մասնագետները ամրացնում են: Բացի այդ՝ վնասված են կամարները, դրսում որմնանկարները շատ արագ են տուժում անձրեւներից եւ արեւից:

Վերականգնումը կտեւի մի քանի ամիս:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՈՒՀԻՆ

«Բարսելոնայի» կիսապաշտպան Այտանա Բոնմատին երկարաձգել է պայմանագիրը կատալոնական ակումբի հետ մինչեւ 2028 թվականի ամառ:

Ինչպես նշում է ESPN-ը, իսպանացին նոր պայմանագրով դարձել է աշխարհի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստուհին: Այնուամենայնիվ, հրապարակումը չի նշում՝ որքան է կազմում մարզիկի աշխատավարձը:

Բոնմատին Բարսելոնայի ակադեմիայի սան է: «Բարսայի» կազմում նա անցկացրել է 270 հանդիպում եւ դարձել 95 գոլի հեղինակ:

Բոնմատին 2023 թվականի «Ոսկե գնդակի» մրցանակակիրն է:

ՌՈԴՐԻՆ՝ ՄՍ-ՈՒՄ ԻՐ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ

«Մանչեսթեր Սիթիի» կիսապաշտպան Ռոդրին անգլիական ակումբի հետ պայմանագիրն ավարտելուց հետո խոսել է իր ծրագրերի մասին:

«Ես եւս երեք տարի ունեմ «Մանչեսթեր Սիթիում», եւ երբ ստորագրեմ պայմանագիրը, չեմ մտածի այլ թիմերի մասին եւ այլեւս ոչինչ չունեմ ասելու», - Ռոդրիի խոսքերն է մեջբերում իտալացի մարզական լրագրող Ֆաբրիցիո Ռոմանոն X սոցիալական ցանցի իր էջում (նախկինում՝ Twitter):

Ավելի վաղ հաղորդվում էր, որ իսպանացի ֆուտբոլիստն ապագայում կարող է տեղափոխվել Մադրիդի «Ռեալ»: Հիշեցնենք, որ Ռոդրին Մադրիդի «Ատլետիկոյի» սան է:

Կիսապաշտպանը «Մանչեսթեր Սիթիում» հանդես է գալիս 2019 թվականի հուլիսից: Այս պահին ֆուտբոլիստի արժեքը գնահատվում է 130 միլիոն եվրո:

«ՆԱՅՔ»-Ի ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԸ՝ ԳԼԽԻՎԱՅՐ

Վերջին շրջանում երկրպագուները նկատել են, որ Nike-ի կողմից արտադրվող որոշ խաղաշապիկների վրա ընկերության տարբերանշանը տարբերվում է ավանդական հորիզոնականից:

Ակումբների երրորդ խաղաշապիկների վրա Nike-ի տարբերանշանը գլխիվայր է:

Փոփոխությունները կապված են «Միասին բարձրանում ենք վեր» արշավի հետ, որն ուղղված է կանանց ֆուտբոլի աջակցմանը:

Սոցիալական ցանցերում նրանք բացատրել են, որ ուղղահայաց տարբերանշանը նպատակ ունի ցուցադրել կանանց ֆուտբոլի վերելքը, միասնականությունն ու զարգացումը համաշխարհային սպորտում:

● *Սեպտեմբերի 20-ին՝ 19:30-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի «5 + 1 պատմություն սիրո մասին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ փոխել սոցիալական փաթեթի իմ հաշիվը: Խնդրում եմ ներկայացնել մանրամասն:

Գրիգոր Ջալիբեկյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ յուրաքանչյուր բյուջետային տարվա սոցիալական փաթեթի գումարների փոխանցման համար լրացվում է նոր դիմում: Սոցփաթեթի հաշիվը կարելի է փոխել միայն նոր բյուջետային տարում՝նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը: Այս դեպքում աշխատողը դիմումի հետ միասին ներկայացնում է նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք, ինչպես նաեւ սոցփաթեթի նախկին հաշիվը սպասարկող բանկից տեղեկանք՝ պարտավորություններ չունենալու վերաբերյալ: Սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում աշխատողն իր հաշվի դրամական միջոցները սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկից սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկ փոխանցելու համար նախկին բանկ է ներկայացնում նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք: Այդ տեղեկանքի հիման վրա սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկն աշխատողի սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները փոխանցում է սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկի սոցփաթեթի հաշվին:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել կամ փոխանցել ցանկացած ուղղություններով միայն աշխատողի կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու եւ սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ (երբ դադարում է նրա՝ սոցիալական փաթեթ ստանալու իրավունքը, եւ նրա սոցփաթեթի հաշվին առնվազն երեք ամիս սոցիալական փաթեթի գումարների փոխանցումներ չեն կատարվել) կամ աշխատողի մահվան դեպքում ժառանգի կողմից սոցփաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու դեպքում:

ԷՋԸ՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կարելի՞ է արդյոք արտոնագիր վերցնել կոնկրետ օրերի համար, թե՞ ոչ:

Հասմիկ Կետիկյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հավելվածի դրույթների 12-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց կողմից բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված, Երեւան քաղաքում եւ մարզկենտրոններում՝ 300 մ2 եւ ավելի, այլ քաղաքներում եւ այլ վայրերում՝ 200 մ2 եւ ավելի, սահմանամերձ գյուղերում 100 մ2 եւ ավելի մակերես ունեցող սրահներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքում կարող է տրամադրվել արտոնագիր որեւէ ամսվա օրվա կամ օրերի համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ «Արտոնագրային վճարների մասին» օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր գործունեության տեսակի մասով յուրաքանչյուր ժամանակահատվածի եւ յուրաքանչյուր գործունեության իրականացման վայրի համար տրվում է առանձին արտոնագիր:

Ի դեպ, ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու, գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու դեպքերում վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում եւ չեն վերադարձվում՝ անկախ այն բանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Այսօր՝ սեպտեմբերի 18-ին, Հայաստանում նշվում է Աստղագիտության օրը. փոքրիկ տոնը համընկնում է նաեւ Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրվա հետ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 11 +24 + 29
Կոտայքի լեռներ	+8 + 11 +25 + 29
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +29 + 30
Գեղարքունիք	+9 + 11 +23 + 28
Լոռի	+9 + 14 +23 + 27
Տավուշ	+12+ 17 +27 + 30
Արագածոտնի լեռներ	+9 + 12 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+15+ 18 +27 + 31

Արարատ	+17 + 20 +33 + 35
Արմավիր	+15 + 18 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 11 +25 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 +32 + 35
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +29 + 32
ԼՂՀ	+13 + 16 +27 + 31
Երեւան	+24 + 26 +30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*